ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՔ-ԲՄԱՇՁԲ-25/5

ք. Արմավիր «09» հոկտեմբերի 2025թ.

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Վ. Սարգսյանի, որը գործում է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԱՆՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սերգեյ Հարությունյանի, որը գործում է «ՊԱՆՏ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում մանկապարտեզի նոր շենքի կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ԱՔ-ԲՄԱՇՁԲ-25/5** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **365 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարի**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող

աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **387000000 (երեք հարյուր ութսունյոթ միլիոն)** ՀՀ դրամ, որից **64500000 (վաթսունչորս միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը *
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,8 տոկոսի չափով
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
5	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
8	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով
9	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով

14	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,- քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև Համաձայնագրի ստորագրման պահից** և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման

հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Արմավիրի համայնքապետարան	«ՊԱՆՏ» ՍՊԸ Ք. Երևան,Նոր Նորք,
Ք. Արմավիր, Հանրապետության 32	Մոլդովական փ., 3շ., բն. 1
ՀՀ Ֆինանսների նախարարություն	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ՝ 900332001560	Հ/Հ՝ 1510052673576700
ՀՎՀՀ՝ 04440427	ՀՎՀՀ՝ 01064849
Համայնքի ղեկավար	Տնօրեն՝ Սերգեյ Հարությունյան
Վ. Սարգսյան	Ս. Հարությունյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 09 » հոկտեմբերի 2025թ. կնքված
ԱՔ-ԲՄԱՇՁԲ-25/5 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6	7
		1. Հողային աշխատանքներ				
1	E1-1545	3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատրով կողլիցք	$մ^3$	100,00	0,500	49,977
2	E1-961	3-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով կողլիցք	$մ^3$	100,00	3,536	353,623
3	E1-1587	3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով բարձելով ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	1900,0	0,668	1268,706
4	գնաց.3	Ավելորդ գրունտի տեղափոխում 7կմ	տն	3420,00	2,438	8339,450
5	E1-1638 E1-1185	Հետլիցք տեղի գրունտով բուլդոզերով,տոփանումով	$մ^3$	200,00	0,478	95,697
		Ընդամենը 1-ով				**10107,454**
		2. Կոնստրուկտորական մաս				
		ե/բետոնե միձույլ հիմք -3,550 նիշ				
1	E11-6	Խճի շերտի պատրաստում տոփանումով	$մ^3$	21,800	17,534	382,246
2	E6-1	Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	$մ^3$	21,800	40,935	892,374
3	E6-22	Միաձույլ ե/բ միաձույլ հիմքերի պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	83,200	66,870	5563,600
4	տեղեկագիր	Ամրան Φ16A500C	կգ	5987,60	0,397	2374,285
5	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	3237,7	0,434	1404,217
6	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x10մմ	կգ	80,07	0,595	47,625
7	E8-27	Ուղղահայաց ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	$մ^2$	325,00	1,116	362,682
		ե/բետոնե միձույլ հատակասալ -0,050 և -2,5 նիշերում				
1	E11-6	Խճի շերտի պատրաստում տոփանումով	$մ^3$	48,500	17,534	850,409
2	E6-14	Խամքարաբետոնի իրականացում B-15 դասի բետոնից	$մ^3$	7,400	52,865	391,205
3	E6-16	Միաձույլ ե/բ հատակի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	53,200	50,110	2665,844

4	տեղեկագիր	Ամրան Φ8A500C	կգ	2101,40	0,446	937,424
		ե/բետոնե միձուլյլ աստիճանավանդակ -2,5-ից -0,4 նիշ				
1	E11-6	Խճի շերտի պատրաստում տուփանումով	$մ^3$	0,700	17,534	12,274
2	E6-1	Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	$մ^3$	0,700	40,935	28,654
3	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	$մ^3$	2,500	114,665	286,662
4	E6-177	Միաձույլ ե/բ աստիճանավանդակի պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	1,500	106,825	160,237
5	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	352,80	0,454	160,005
6	տեղեկագիր	Ամրան Φ8A500C	կգ	15,50	0,446	6,914
7	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	10,9	0,434	4,727
		<<1>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	9,000	114,099	1026,893
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	11,200	104,219	1167,250
3	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	$մ^3$	4,950	114,665	567,592
4	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	1522,80	0,397	603,841
5	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	387,00	0,397	153,459
6	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	449,70	0,397	178,321
7	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	124,00	0,397	49,170
8	տեղեկագիր	Ամրան Φ14A500C	կգ	121,40	0,397	48,139
9	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	510,50	0,454	231,527
10	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	840,1	0,434	364,358
11	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	33,1	0,434	14,356
12	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	122,46	0,595	72,838
		<<2>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	9,900	114,099	1129,582
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	10,400	104,219	1083,875
3	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	$մ^3$	1,700	114,665	194,930
4	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	1608,80	0,397	637,943
5	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	508,80	0,397	201,756
6	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	591,20	0,397	234,431
7	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	163,00	0,397	64,635

9	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	180,20	0,454	81,726
10	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	1241,8	0,434	538,579
11	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	3,5	0,434	1,518
12	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	125,60	0,595	74,706
		<<3>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	14,800	114,099	1688,668
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	1,600	104,219	166,750
3	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	$մ^3$	3,900	114,665	447,193
4	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	2405,50	0,397	953,862
5	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	710,00	0,397	281,539
6	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	773,90	0,397	306,877
7	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	213,30	0,397	84,581
9	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	367,80	0,454	166,808
10	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	1424,5	0,434	617,817
11	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	7,6	0,434	3,296
12	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	150,72	0,595	89,647
		<<4>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	12,200	114,099	1392,010
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	11,500	104,219	1198,516
3	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	1984,00	0,397	786,723
4	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	570,50	0,397	226,222
5	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	662,90	0,397	262,862
6	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	182,70	0,397	72,447
7	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	1175,5	0,434	509,824
8	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	138,16	0,595	82,177
		<<5>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	11,400	114,099	1300,731
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	$մ^3$	11,800	104,219	1229,782
3	տեղեկագիր	Ամրան Φ32A500C	կգ	343,50	0,397	136,209
4	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	2018,80	0,397	800,522
5	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	940,50	0,397	372,940
6	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	531,50	0,793	421,515

7	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	64,20	0,397	25,457
8	տեղեկագիր	Ամրան Φ14A500C	կգ	22,80	0,397	9,041
9	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	1322,9	0,434	573,753
10	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	5,3	0,434	2,299
11	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	138,16	0,595	82,177
		<<6>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	14,800	114,099	1688,668
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	15,000	104,219	1563,282
3	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	մ^3	5,750	114,665	659,324
4	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	2405,50	0,397	953,862
5	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	710,00	0,397	281,539
6	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	773,90	0,397	306,877
7	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	213,30	0,397	84,581
9	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	367,80	0,454	166,808
10	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	1427,2	0,434	618,988
11	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	11,2	0,434	4,858
12	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	150,72	0,595	89,647
		<<7>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	9,900	114,099	1129,582
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	10,500	104,219	1094,297
3	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	մ^3	1,700	114,665	194,930
4	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	1608,80	0,397	637,943
5	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	508,80	0,397	201,756
6	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	591,20	0,397	234,431
7	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	163,00	0,397	64,635
9	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	180,20	0,454	81,726
10	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	984,9	0,434	427,159
11	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	3,5	0,434	1,518
12	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	125,60	0,595	74,706
		<<8>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	9,000	114,099	1026,893
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	11,200	104,219	1167,250

3	Е6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում В25 դասի բետոնից	մ^3	4,950	114,665	567,592
4	տեղեկագիր	Ամրան Ф28А500С	կգ	1522,80	0,397	603,841
5	տեղեկագիր	Ամրան Ф25А500С	կգ	387,00	0,397	153,459
6	տեղեկագիր	Ամրան Ф22А500С	կգ	449,70	0,397	178,321
7	տեղեկագիր	Ամրան Ф20А500С	կգ	124,00	0,397	49,170
8	տեղեկագիր	Ամրան Ф14А500С	կգ	121,40	0,397	48,139
9	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	510,50	0,454	231,527
10	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	840,1	0,434	364,358
11	տեղեկագիր	Ամրան Ф6А240	կգ	33,1	0,434	14,356
12	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	122,46	0,595	72,838
		<<Ա>> առանցքով անցնող շրջանակ				
1	Е6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում В-25 դասի բետոնից	մ^3	7,800	104,219	812,907
2	Е6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում В25 դասի բետոնից	մ^3	5,200	114,665	596,258
3	տեղեկագիր	Ամրան Ф25А500С	կգ	397,80	0,397	157,741
4	տեղեկագիր	Ամրան Ф22А500С	կգ	462,30	0,397	183,318
5	տեղեկագիր	Ամրան Ф20А500С	կգ	127,40	0,397	50,518
6	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	511,70	0,454	232,071
7	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	424,1	0,434	183,936
8	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	75,36	0,595	44,824
		<<Բ>> առանցքով անցնող շրջանակ				
1	Е6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում В-25 դասի բետոնից	մ^3	21,100	104,219	2199,016
2	Е6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում В25 դասի բետոնից	մ^3	5,300	114,665	607,724
3	տեղեկագիր	Ամրան Ф25А500С	կգ	774,00	0,397	306,917
4	տեղեկագիր	Ամրան Ф22А500С	կգ	899,40	0,397	356,642
5	տեղեկագիր	Ամրան Ф20А500С	կգ	247,90	0,397	98,301
6	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	528,20	0,454	239,554
7	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	766,8	0,434	332,567
8	տեղեկագիր	Ամրան Ф6А240	կգ	10,3	0,434	4,467
9	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	75,36	0,595	44,824
		<<Գ>> առանցքով անցնող շրջանակ				
1	Е6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում В-25 դասի բետոնից	մ^3	19,800	104,219	2063,532
2	Е6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում В25 դասի բետոնից	մ^3	5,300	114,665	607,724

3	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	572,20	0,397	226,897
4	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	885,80	0,397	351,250
5	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	366,40	0,397	145,290
6	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	528,20	0,454	239,554
7	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	1119,4	0,434	485,493
8	տեղեկագիր	Ամրան Φ6A240	կգ	10,3	0,434	4,467
9	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	75,36	0,595	44,824
		<<Դ>> առանցքով անցնող շրջանակ				
2	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	24,100	104,219	2511,673
4	տեղեկագիր	Ամրան Φ28A500C	կգ	696,20	0,397	276,067
5	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	1514,00	0,397	600,352
6	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	1114,20	0,397	441,818
7	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	366,40	0,397	145,290
8	տեղեկագիր	Ամրան Φ14A500C	կգ	23,70	0,397	9,398
10	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	1181,4	0,434	512,383
12	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	75,36	0,595	44,824
		<<Ե>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	8,000	104,219	833,750
2	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	մ^3	4,750	114,665	544,659
3	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	404,00	0,397	160,200
4	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	469,40	0,397	186,133
5	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	129,40	0,397	51,311
6	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	501,30	0,454	227,354
7	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	430,9	0,434	186,885
8	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	50,24	0,595	29,882
		<<Զ>> առանցքով անցնող շրջանակ				
1	E6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	մ^3	8,100	104,219	844,172
2	E6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում B25 դասի բետոնից	մ^3	5,300	114,665	607,724
3	տեղեկագիր	Ամրան Φ25A500C	կգ	429,50	0,397	170,311
4	տեղեկագիր	Ամրան Φ22A500C	կգ	447,90	0,397	177,607
5	տեղեկագիր	Ամրան Φ20A500C	կգ	123,50	0,397	48,972
6	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	528,20	0,454	239,554
7	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	379,0	0,434	164,375

8	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	94,20	0,595	56,030
		<<Է>> առանցքով անցնող շրջանակ				
1	Е6-161	Միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում В-25 դասի բետոնից	$մ^3$	8,100	104,219	844,172
2	Е6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում В25 դասի բետոնից	$մ^3$	5,300	114,665	607,724
3	տեղեկագիր	Ամրան Ф25А500С	կգ	429,50	0,397	170,311
4	տեղեկագիր	Ամրան Ф22А500С	կգ	447,90	0,397	177,607
5	տեղեկագիր	Ամրան Ф20А500С	կգ	123,50	0,397	48,972
6	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	528,20	0,454	239,554
7	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	379,0	0,434	164,375
8	Շուկա	Պողպատե տափօղակ 100x100x20մմ	կգ	94,20	0,595	56,030
		Ե/բետոնե ծածկի սալ -0,050 նիշ				
1	Е6-173	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալի պատրաստում В25դասի բետոնից	$մ^3$	81,3000	82,271	6688,641
2	Е6-161	Միաձույլ ե/բ հեծանի պատրաստում В-25 դասի բետոնից	$մ^3$	0,600	104,219	62,531
3	տեղեկագիր	Ամրան Ф20А500С	կգ	118,50	0,397	46,989
4	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	7037,80	0,454	3191,852
5	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	50,5	0,434	21,902
		Ե/բետոնե ծածկի սալ +3,25 նիշ				
1	Е6-173	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալի պատրաստում В25դասի բետոնից	$մ^3$	86,2000	82,271	7091,770
2	Е6-161	Միաձույլ ե/բ հեծանի պատրաստում В-25 դասի բետոնից	$մ^3$	0,600	104,219	62,531
3	տեղեկագիր	Ամրան Ф20А500С	կգ	118,50	0,397	46,989
4	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	7361,80	0,454	3338,795
5	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	50,5	0,434	21,902
		Ե/բետոնե ծածկի սալ +6,55նիշ				
1	Е6-173	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալի պատրաստում В25դասի բետոնից	$մ^3$	93,2000	82,271	7667,667
4	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	9186,40	0,454	4166,306
5	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	492,2	0,434	213,471
		Տանիքի կառուցման աշխատանքներ				
1	Е12-299 Е12-300	Ցեմենտե հարթեցնող շերտի պատրաստում 30մմ հաստությամբ	$մ^2$	616,000	1,542	950,077
2	Е12-289 Е12-291	Տանիքի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոսպան	$մ^2$	616,000	0,954	587,732
3	Е12-288	Փրփրապեռլիտե բարձիկներ 100մմ	$մ^3$	61,600	26,678	1643,381
4	Е10-70	Փայտյա կոնստրուկցիաների տեղադրում,	$մ^3$	18,165	243,420	4421,727

5	E12-404	Տանիքածածկույթի պատրաստում КП-25-0.5մմ գունավոր/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով	$մ^2$	745,000	10,035	7476,289
6	Տեղեկագիր	Կավարամածի տախտակ 50x50	$մ^3$	3,300	173,486	572,505
7	E10-194	Տախտակներ 150x50	$մ^2$	99,80	9,272	925,390
8	E12-278	Ցվիք և Ջրհորդան հարթ գունավոր թիթեղից 0,55մմ	գմ	162,00	22,465	3639,352
9	P8-191	Տանիքի ջրատար խողովակ 150 մմ,0,5 հարթ Գունավոր թիթեղից L=7	կ-տ	12	69,336	832,037
10	E12-280	Գագաթի հարթ գունավոր թիթեղ , 0.5 մմ , b=300մմ լայնությամբ /242գմ/	$մ^2$	72,600	7,714	560,002
11	E12-280	Գոգնոցներ և երդիկների երեսպատում հարթ գունավոր թիթեղից , 0.55 մմ ,	$մ^2$	19,000	7,714	146,557
12	Շուկա	Ձնարգել, 1250մմ երկարությամբ	հատ	64,00	4,580	293,114
13	E10-201	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	$մ^3$	18,165	10,991	199,660
14	E10-203	Կավարամածի ,տախտակների ,հակահրդեհային պաշտպանություն	$մ^2$	1319,40	0,357	470,712
15	E10-209	Կավարամածի ,տախտակների , հականեխիչ նյութով	$մ^2$	1319,40	1,083	1429,527
16	E10-71	Ձեղնահարկի պատուհանների պատրաստում	հատ	5,000	63,129	315,643
		Տանիք բարձրացող մետաղական աստիճան և մտոց				
1	E 9-46 գ-1,2	Տանիք բարձրացող մետաղական աստիճանի պատրաստում և տեղադրում	տն	0,023	233,516	5,277
2	Շուկա	Անկյունակ 30x 30x2մմ արժեքը	գմ	15,2000	0,565	8,589
3	Շուկա	Φ15x2,5մմ պողպատե խողովակի արժեքը	գմ	10,8000	0,818	8,833
4	E33-82	Մետաղական աստիճանի ներկում երկշերտ հակակոռոզիոն ներկով	տն	0,02260	42,063	0,951
5	E9-34	Մետակաղան դռան տեղադրում	$մ^2$	0,720	60,197	43,342
6	E15-614	Մետաղական դռան 2շերտ յուղաներկում	$մ^2$	1,440	1,741	2,507
7	E10-70	Փայտյա 160x80մմ չորսուներից նրբատախտակի հատակի հենարանների տեղադրում	$մ^3$	0,340	243,420	82,763
8	P5-119	12մմ հաստ.նրբատախտակից անցուղիների հատակի պատրաստում	$մ^2$	9,10	4,848	44,112
9	շուկա	40x40x4 մմ մետաղական անկյունակներից եզրակալների տեղադրում,L=100մմ,ք.600մմ,107գմ,1գմ-2,42կգ	կգ	258,94	0,467	120,922
		Արտաքին պատեր				
1	E8-140	Պատերի շարվածք 20սմ հաստ. թեթև բետոնե բլոկներով	$մ^3$	164,20	27,684	4545,638
2	E8-150	Անցքերի լցնում B7,5 դասի թեթև բետոնով	$մ^3$	41,00	40,855	1675,060

3	Е8-59	Շարվածքի ամրանավորում	կգ	3070,3	0,095	291,613
4	տեղեկագիր	Ամրան Ф12А500С	կգ	1811,6	0,397	718,360
5	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	1258,7	0,454	570,858
6	Е6-170	Միաձույլ ե/բ բարավորի պատրաստում В-15 դասի բետոնից	$մ^3$	14,400	97,788	1408,142
7	Е6-168	Միաձույլ ե/բ գոտու պատրաստում В-20 դասի բետոնից	$մ^3$	1,000	76,476	76,476
8	տեղեկագիր	Ամրան Ф14А500С	կգ	1124,5	0,397	445,902
9	տեղեկագիր	Ամրան Ф6А240	կգ	367,5	0,434	159,388
10	տեղեկագիր	Ամրան Ф8А500С /երեսապատման աշխատանքների համար /	կգ	334,50	0,446	149,219
11	շուկա	Փրփրապլաստ 20մմ հաստ	$մ^2$	50,00	0,892	44,609
		Ե/բ մաձույլ աստիճանավանդակ -2,500-ից -0,050,-0,150-ից +3,250 և +3,250-ից +6,550 նիշեր				
1	Е6-145	Միաձույլ ե/բ պատի պատրաստում В25 դասի բետոնից	$մ^3$	0,600	114,665	68,799
2	Е6-177	Միաձույլ ե/բ աստիճանավանդակի պատրաստում В-25 դասի բետոնից	$մ^3$	8,000	106,825	854,597
3	տեղեկագիր	Ամրան Ф12А500С	կգ	501,50	0,397	198,862
4	տեղեկագիր	Ամրան Ф8А500С	կգ	328,80	0,446	146,676
5	տեղեկագիր	Ամրան Ф6А240	կգ	150,5	0,434	65,273
		Մետաղական աստիճանավանդակ -1				
1	Е11-6	Խճի շերտի պատրաստում տոփանումով	$մ^3$	0,100	17,534	1,753
2	Е6-1	Բետոնե նախաշերտի պատրաստում В7,5 դասի բետոնից	$մ^3$	0,100	40,935	4,093
3	Е6-5	Միաձույլ ե/բ հիմքերի պատրաստում В-15 դասի բետոնից	$մ^3$	0,500	68,806	34,403
4	տեղեկագիր	Ամրան Ф10А500С	կգ	18,60	0,454	8,436
5	տեղեկագիր	Ամրան Ф8А240	կգ	4,1	0,434	1,778
6	Е8-27	Ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	$մ^2$	2,00	1,116	2,232
7	Е 9-46 գ-1,2	Մետաղական աստիճանի պատրաստում և տեղադրում	տն	0,374	233,516	87,241
8	Շուկա	Խողովակ 160x160x4մմ ,1գմ-19,27կգ	գմ	12,2400	10,721	131,227
9	Շուկա	Պողպատե թիթեղ 6մմ.1մ2- 47,1կգ	$մ^2$	2,924	29,189	85,359
10	Շուկա	Խարսխային հեղյուս М20	հատ	8,000	0,743	5,948
11	Շուկա	Մանեկ М20	հատ	32,000	0,297	9,517
12	Е 9-122 գ-1,2	Աստիճանավանդակի բազրիքի պատրաստում և տեղադրում	տն	0,62	134,357	83,731
13	Շուկա	Մետաղական խողովակ 30x50x2մմ	գմ	232,000	1,145	265,635
14	Շուկա	Մետաղական խողովակ 20x20x2մմ	գմ	78,000	0,580	45,234

15	E33-82	Մետաղական մակերևույթների ներկում երկշերտ հակակոռոզիոն ներկով	տն	0,99680	42,063	41,929
		Մետաղական աստիճանավանդակ -2				
1	E11-6	Խճի շերտի պատրաստում տոփանումով	$մ^3$	0,100	17,534	1,753
2	E6-1	Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	$մ^3$	0,100	40,935	4,093
3	E6-5	Միաձույլ ե/բ հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	0,500	68,806	34,403
4	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	18,60	0,454	8,436
5	տեղեկագիր	Ամրան Φ8A240	կգ	4,1	0,434	1,778
10	Շուկա	Խարսխային հեղույս M20	հատ	8,000	0,743	5,948
11	Շուկա	Մանեկ M20	հատ	32,000	0,297	9,517
6	E8-27	Ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	$մ^2$	2,00	1,116	2,232
7	E 9-46 գ-1,2	Մետաղական աստիճանի պատրաստում և տեղադրում	տն	0,374	233,516	87,241
8	Շուկա	Խողովակ 160x160x4մմ ,1գմ-19,27կգ	գմ	12,2400	10,721	131,227
9	Շուկա	Պողպատե թիթեղ 6մմ.1մ2- 47,1կգ	$մ^2$	2,924	29,189	85,359
10	E 9-122 գ-1,2	Աստիճանավանդակի բազրիքի պատրաստում և տեղադրում	տն	0,25	134,357	34,086
11	Շուկա	Մետաղական խողովակ 30x50x2մմ	գմ	73,000	1,145	83,583
12	Շուկա	Մետաղական խողովակ 20x20x2մմ	գմ	78,000	0,580	45,234
13	E33-82	Մետաղական մակերևույթների ներկում երկշերտ հակակոռոզիոն ներկով	տն	0,62730	42,063	26,386
		Օդափոխության հորան				
1	E8-140	Պատերի շարվածք 10սմ հաստ. թեթև բետոնե բլոկներով	$մ^3$	2,64	35,734	94,339
2	E8-150	Անցքերի լցնում B7,5 դասի թեթև բետոնով	$մ^3$	1,32	40,855	53,929
3	E8-59	Շարվածքի ամրանավորում	տն	0,0409	94,979	3,887
4	տեղեկագիր	Ամրան Φ10A500C	կգ	40,92	0,454	18,558
5	E15-201	Ց/ավազե սվաղ 30մմ	$մ^2$	24,600	2,542	62,536
6	E9-94 k-1,2	Ծածկի մետաղական հիմնակմախքի պատրաստում և տեղադրում	տն	0,1742	111,911	19,495
7	Շուկա	Մետաղական խողովակ 40x40x2	գմ	22,000	1,145	25,189
8	Շուկա	Մետաղական անկյունակ 50x50x4	գմ	24,200	1,442	34,905
9	E12-284	Փայտատաշեղային սալի տեղադրում 12մմ հաստ./ОСП/	$մ^2$	5,300	3,013	15,969
10	8-273	Բիտումային հիմքով ճկուն տանիքային ծածկույթ	$մ^2$	5,300	2,825	14,972
11	Շուկա	Խարսխային հեղույս դյուբել 110մմ	հատ	66	0,223	14,721
12	E15-647	Մետաղական էլեմենտների 2շերտ ներկում հակակոռոզիոն ներկով	$մ^2$	8,360	1,237	10,339
		Մետաղական բազրիք				
1	E7-735	Ալյումինե հավաքովի էլեմենտներից բազրիքների տեղադրում	գմ	60,20	32,096	1932,176

		Ընդամենը 2-ով				**149076,634**
		3. Ճարտարապետական մաս				
		Հատակներ				
1	E11-14	Ջրամեկուսչ շերտի պատրաստում 1 շերտ իզոգամից	մ^2	131,3	3,088	405,430
2	E11-55 E11-56 q=6	50մմ հաստությամբ g/ավազե հարթեցնող շերտ /540,5+489,2/մ2	մ^2	1029,70	2,415	2486,634
